

18 ՉՈՐ ԴՈՒՐԵԻՆԱ ՖԱՍՈՅԻ ՄԵՉ

Տասնութ անձեր սպանուած են Ափրիկէի Սահէլի շրջանի երկիր Պուրքինա ֆասոյի մէջ: Ըստ աղբիւրներու, անոնք զոհ գացած են իսլամական ծայրայեղական ջոկատի մը յարձակումին: Զարկ է կը տրուի, որ Նիկերիայէն մինչեւ Մալի ամբողջ շրջանը կ'ենթարկուի ծայրայեղական իսլամական շարժումներու յարձակումին, որոնք ցարդ իսլամ են հազարաւոր զոհեր:



ԼԻԲԱՆԱՆ ԿՐՆԱՅ ՉՐԿՈՒԻԼ ԶՈՒԷՐԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՌՈՒՆՔԸՆ

Միացեալ ազգերու կազմակերպութիւնը յայտարարեց, թէ Լիբանան, Զարաւային Սուտան եւ Վենեսուէլա պիտի գրկուին Ընդհանուր ժողովին ջուլտարկելու իրաւունքէն, եթէ չվճարեն իրենց բաժինը կազմակերպութեան ամսական կամ պիտոճին մէջ: Լիբանանի Արտաքին գործերու նախարարութիւնը յստակացուց, թէ արդէն առած է քայլերը վճարումը կատարելու համար:



ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԵՏՔ Է ԱՄՐՏԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ

ԱՄՆ-ի զինեալ ուժերու ընդհանուր սպայակոյտի պետ զորավար Մարք Մելի յայտարարեց, թէ այս տարուան ընթացքին դժուար պիտի ըլլայ ռուսական ուժերը հեռացնել ամբողջ Ուքրանիոյ տարածքէն: Ան աւելցուց, որ Ուքրանիոյ մէջ պատերազմը պետք է աւարտի բանակցութեամբ: Ուքրանական բանակը պետք ունի զենքի եւ մարզուելու այդ զենքի գործածութեան մէջ: Մելի յայտարարեց, թէ Ռուսիա ցարդ կորսնցուցած է 400 հազար զինուոր:



ԵՐՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Լիբանանի դատական ամենաբարձր ատենադաշտը յայտարարեց, թէ երրորդական դատական պատուիրակութիւնը աւարտած է իր ընտրութեան առաջին փուլը: Պատուիրակութիւնը իր գործունէութիւնը սկսած է Երկուշաբթի՝ 16



Յունուարին: Ընտրութիւնը տեղի կ'ունենայ երեք երրորդական երկիրներու՝ Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Լիքսեմպուրկի պահանջով, ընտրուող համար Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչին դէմ եւ այլ դրամատուներու ընդհանուր տնօրէններուն դէմ ուղղուած ամբաստանութիւններ՝ դրամաշրջութեան, դրամ լուսլու եւ նոյն տիպի այլ հարցերու համար:

ՍՈՒՐԻԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԱՐՅԸ

Սուրիացի գաղթականներու հարցը օրէ օր կը ստանայ աւելի ուշադրութիւն լիբանանեան տարբեր կողմերէ: Երրորդական երկիրներ կը միջամտեն այս հարցին մէջ, գաղ-



թականները Լիբանան պահելու համար աշխարհաքաղաքական պատճառներով: Երկու «Ալ ժումհուրիա» օրաթերթը գրած էր, թէ Գերմանիոյ դեսպան Անտոն Բիստուրլ կը միջամտէ այս հարցին մէջ եւ այդ քայլը դժգոհութեան ալիք մը բարձրացուցած է դիւանագիտական շրջանակին մէջ:

Լիբանան մեծ ճիգ թափած էր համոզելու համար Երրորդական միութեան երկիրները, թէ սուրիացի գաղթականներու մնալը երկրին մէջ պիտի փոխէ անոր համայնքային կենսաձեւը եւ պիտի վտանգէ երկրին կրօնական հանրութեան դիմագիծը: Երկիրներու մեծամասնութիւնը համոզուած էին: Սակայն Ֆրանսա եւ Գերմանիա անդրդուելի կը մնան գաղթականները Լիբանանի մէջ պահելու իրենց քաղաքականութեան մէջ: Այս հարցն է որ կը մտահոգէ լիբանանցի քաղաքագետները:

ՍԱԿ-Ի ՊԱՅԱՆՑ

Միջազգային Արդարութեան դատարանը, որուն կեդրոնը կը գտնուի Զոլանտայի Լա Էյ քաղաքին մէջ, ստացած է պահանջ մը Միացեալ ազգերու կազմակերպութե-



նէն, իր կարծիքը յայտնելու համար իսրայէլեան ուժերու կողմէ գրաւեալ Պաղեստինի մէջ օրէնքի խախտումին մասին: Դատարանը պիտի պատրաստէ ցանկը այն կազմակերպութիւններուն, որոնք իրաւունք ունին այս հարցի ընտրուումներուն մասնակցելու:


ԹՈՒՐԵԿԱ ՅԱՅՏԵՏ ԻՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ նախագահութեան խօսակը յայտարարեց, թէ Թուրքիա յայտնած է իր պատրաստակամութիւնը միջնորդելու Ռուսիոյ եւ Ուքրանիոյ միջեւ տեղի ունեցող պատերազմին: Ն ա ի ա գ ա հ ՈՒՆԵԿ Թայիպ Էրտողան Ուքրանիոյ նախագահ Կլուտի-միր Զելենսքիին յայտնած է իր պատրաստակամութիւնը:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Լոյտ Օսթին յայտարարեց, թէ ԱՄՆ պիտի շարունակէ զենք մատակարարել Ուքրանիոյ: Ան ներկայ պահը համարեց ճակատագրական Ուքրանիոյ պատերազմի հոլովոյթին մէջ: Ան աւելցուց, որ «Փաթիլոթ» մակնիշի հակաօդային համակարգը պիտի փոխանցուի Ուքրանիոյ իրականացի սպաներու կողմէ եւ ուքրանացի զինուորներ պիտի մարզուին անոր գործածութեան համար:

ՌՈՒՍԻՈՅ ԴՊԱՅՈՒՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀԱՆՈՒՄ

Ռուսիոյ Դաշնութեան նախագահի խօսակը յայտարարեց, թէ Թուրքիոյ միջնորդութեամբ Ուքրանիոյ եւ Ռուսիոյ միջեւ տեղի ունեցող պատերազմին: Ն ա ի ա գ ա հ ՈՒՆԵԿ Թայիպ Էրտողան Ուքրանիոյ նախագահ Կլուտի-միր Զելենսքիին յայտնած է իր պատրաստակամութիւնը:



ՌՈՒՍԻՈՅ ԱՊԱՅՈՒՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀԱՆՈՒՄ

Ռուսիոյ Դաշնութեան նախագահի խօսակը յայտարարեց, թէ Թուրքիոյ միջնորդութեամբ Ուքրանիոյ եւ Ռուսիոյ միջեւ տեղի ունեցող պատերազմին: Ն ա ի ա գ ա հ ՈՒՆԵԿ Թայիպ Էրտողան Ուքրանիոյ նախագահ Կլուտի-միր Զելենսքիին յայտնած է իր պատրաստակամութիւնը:



ժողով գումարած է նախագահ Վլադիմիր Փութինի նախագահութեամբ: Նախագահը տեղեակ պահեց ժողովականները միջազգային վերջին անցուդարձերու մասին: Նաեւ արժանաւորեց ընկերային եւ տնտեսական հարցերը: Ներկաները տեղեակ պահուեցան նաեւ Ուքրանիոյ պատերազմի հոլովոյթին մասին:

Միւս կողմէ, գրաւել է տը Սոլիտար քաղաքը, ռուսական ուժեր շարունակեցին յառաջադրաբար դէպի ռազմավարական կարեւորութիւն ունեցող Արթիմովիսք քաղաքը եւ մտան անոր արուարձաններէն մէկը համարուող Բիլշիւքա աւանը:

ՌԱԲԱԿՈՑՈՒՄ ԹՐԵԱԿԱՆ ԽԱՐԻՍԵԻ ՀՈՒՐԶ

Մարդկային Իրաւանց Սուրիոյ դիտարանը յայտարարեց, թէ թրքական խարիսիս մը, որ կը գտնուի հիւսիսային Պապ Ալ Սալամա անցքին մօտ, ենթարկուած է ռմբակոծումի: Ռմբակոծումը տեղի ունեցած է քրտական ուժերու ազդեցութեան տակ գտնուող շրջաններէն, Զալէպի հիւսիսային կողմը: Մարդկային կորուստ չէ արձանագրուած: Թրքական եւ անոնց համակիր ուժեր պատասխան կրակ բացած են ռմբակոծումի արդիւրին ուղղութեամբ:

ԱՄՆ-Ի ԶԱՅՆԵՐԸ ՎՏԱՆԱԳՈՐ

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտարարեց, թէ ԱՄՆ-ի վարչակազմին առած քայլերը՝ պայքարե-



լու համար սղաճի դէմ, պիտի վտանգեն երրորդական տնտեսութիւնը: Ըստ Մաքրոնի, ԱՄՆ-ի ընկերութիւններու տրուելիք օժանդակութեան փաթեթը պատճառ պիտի դառնայ, որ շատ մը երրորդական հաստատուած ընկերութիւններ փոխադրուին ԱՄՆ՝ օգտուելու համար այդ ընծայուած առիթէն:

ԱՊՕՐԻՆԻ ԶԱՅՆ

Իրանեան բանակի լրատու աղբիւրը յայտարարեց, թէ երրորդական միութեան կողմէ Յեղափոխութեան Պահապանները ահաբեկչական կազմակերպութիւններու շարքին դասելը հակադարձութիւն է այն ծախողութեան, որուն մատուցեցան երրորդականները Իրանի հարցին մէջ միջամտելու որպէս արդիւն: Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիին այլ այս հարցը համարած էր քայլ մը իրենց ծախողութիւնը թողարկելու համար:



ԱՏՐՊԷՅՃԱՆ ՄԱՍԱՄԲ ԲԱՅԱՐ ԿԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԸ

Ատրպէյճան մասամբ բացաւ Զայաստանէն Արցախ կազ փոխադրող կազատար խողովակը: Տկար ճնշումի



պատճառով կազը պիտի հասնի Ստեփանակերտ եւ կարգ մը ռազմավարական կարեւորութիւն ունեցող վայրեր միայն:

ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զայաստանի մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Ապպաս Պատախշան Չոհուրի յայտարարեց, թէ Զայաստանի ապահովութիւնը Իրանի ապահովութիւնն է: Ան իր երկրին քաղաքականութիւնը բացատրեց որպէս բոլոր ուղղութիւններով համագործակցութեան գարգացումի քաղաքականութիւն: Ըստ դեսպանին, պետք է յարգուին երկիրներու անկախութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը: Ան յոյս յայտնած է, որ համագործակցութիւնը կը զարգանայ Իրանի եւ Զայաստանի միջեւ:

ԶԵՏԱԸՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Զայկական բանակի ճարտարագիտական վաշտին մէջ պատահած հրդեհին հետաքննութիւնը կը շարունակուի:



Տակաւին ձեռքբերուած անձեր չկան: Զարկ է կը տրուի, որ աղետին պատճառով 15 զինուոր զոհուած է եւ երեք հոգի ծանր այրուածք ստացած են:

«ԱՆՎՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՎՈՐՄԸ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱԿՈՆԻՐՈՒՄԸ»

ՀՀ ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐՔԻ ՌՈՒՄ ԳԵՍՊՄԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և մարմնակրթության նախարար Ժաննա Անդրեասենը ընդունած է Հայաստանի Հանրապետության մեջ Ռուսիոյ արտակարգ և լիազոր դեսպան Սերկեյ Զոփիրեի: Հանդիպման ներկայ էր նաև ՀՀ ԿԳՄՄ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:



Սերկեյ Զոփիրեի շնորհաբերած է Ժաննա Անդրեասենին նախարար նշանակություն առիթով՝ մաղթելով յաջողություններ այդ կարևոր և պատասխանատու պաշտոնին:

ԿԳՄՄ նախարարը նշած է, որ Հայաստանի և Ռուսիոյ միջպետական յարաբերություններում մեջ համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի և մարմնամարզի ոլորտներում մեջ ամանձնայատուկ տեղ կը գրաս: Համատեղ ծրագրերու շարունակականությունն ու ոլորտային նոր նախաձեռնություններու իրականացումը օրակարգային առաջադեպերու են: Որպես համագործակցության կարևոր բաղադրիչ՝ նախարար Ժաննա Անդրեասենը շեշտադրած է երկկողմ ծրագրերու շարունակական իրականացումը՝ միջոցառումներու, փոփոխական կամ, համատեղ մշակութային և մարզական միջոցառումների իրականացման ձևաչափով: Կարևորում է նաև գիտության և կրթության ոլորտներում մեջ համագործակցության խորացումը, այս ծիրին մեջ նշում է կրթաթոշակային ծրագրերուն մասին, ուր ՀՀ երիտասարդները անվճար կրթության հնարավորություն կը ստանան Ռուսիոյ բարձրագույն ուսումնական հաստատություններում մեջ:

Նշելով, որ ԿԳՄՄ նախարարության համակարգման ոլորտներում մեջ ամ կայ նախաձեռնություններու շարունակական իրականացումը պիտի նպաստե հայ-ռուսական համագործակցության զարգացման՝ ռուս դեսպանը պատրաստակամություն յայտնած է աջակցելու երկու երկիրներու նախարարություններուն և ոլորտային կառույցներուն միջե համատեղ ծրագրերու իրականացման ու փոխգործակցության սերտացման: Սերկեյ Զոփիրեի կարևորած է քաղաքացիական հասարակության և երիտասարդներու ներգրավումը հայ-ռուսական համատեղ նախագիծերում մեջ, մասնավորապես՝ մարզական և կրթամշակութային միջոցառումներում մեջ: Այս ծիրին մեջ ընդգծում է յաջողիկային կայանալիք ռուս հանրային դաշնակախար Տենիս Մացեի և Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի համատեղ համերգը, որ տեղի պիտի ունենայ Երեւանի մեջ, Արամ Խաչատրեան համերգասրահին մեջ:

Կողմերը անդրադարձած են նաև 2023 թուականին Արամ Խաչատրեանի 120, Հայ ֆիլմի 100, Ս. Ռախմանի-նովի 150, Ֆ. Շալապիի 150-ամեյա յոթելեանկան ծրագրերուն և քննարկած՝ Հայաստանի ու Ռուսիոյ մեջ համատեղ միջոցառումներու կազմակերպման հնարավորությունները:

(Շար.ը տեսնել 4րդ էջ) ▶▶

«ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԽՃՃՈՒԱԾ ԵՆ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԳԵԼԱՓՈՎԱԿՄԱՆ ՇՈՒՐՋ ԻՐ ԽՕՍՈՅԹԻՆ ՄԵՋ»

ԱՐԱՐԱՏ ՄԻՐՁՈՅՏԵԱՆԻ ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑԸ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյանը կը վստահեցնե, որ Հայաստանը Ատրպեյճանի հետ խաղաղ յարաբերություններու հաստատման բանակցությունները երբեք չէ դադարեցնած: Նախարարը կ'ընդգծե, որ Հայաստանը կառուցողական և բարեխիղճ մտեցում կը ցուցաբերե բանակցային գործընթացին, քանի որ մեր վերջնականատակը տարածաշրջանին մեջ անվտանգություն և խաղաղության հաստատումն է:

«Արմենիան»-ին տուած հարցազրույցին մեջ ՀՀ արտաքին գործերու նախարարը անդրադարձած է նաև Ատրպեյճանի կողմէ Լաչինի միջանցքը փակելու հետեւանցով ստեղծուած իրավիճակին, իրավիճակին վերաբերեալ ատրպեյճանական կողմի կեղծ և իրարամերձ յայտարարություններուն, տարածաշրջանային հաղորդակցության բացման գործընթացին և այլ թեմաներու:

- Ինչ զարգացումներ կան Հայաստան-Ատրպեյճան յարաբերությունների կարգաւորման գործընթացի առումով: Կարծիքներ են հնչում, որ գործընթացը փակուղի է մտել:

- Հայաստան Ատրպեյճանի հետ խաղաղ յարաբերությունների հաստատման պայմանագրի շուրջ բանակցությունները երբեք էլ չի դադարեցրել: Անկախ Լաչինի միջանցքում ատրպեյճանական ապօրինի գործողություններից և մտնկովեան հանդիպման յետաձգումից՝ մենք աւելի քան մեկ ամիս առաջ ատրպեյճանական կողմին ենք փոխանցել պայմանագրի նախագծի վերաբերեալ մեր նոր առաջարկները և դրանց հիմնարկները, բայց դեռուս արծագանք չենք ստացել: Այսպիսով, գնդակն այժմ Ատրպեյճանի դաշտում է:

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ Հայաստանը կառուցողական և բարեխիղճ մտեցում է ցուցաբերում բանակցային գործընթացին, քանի որ մեր վերջնականատակը տարածաշրջանում անվտանգության և խաղաղության հաստատումն է: Մենք նաև ակնաշարուր ենք միջազգային հանրության յորդորներին, և պատրաստ ենք աւելի բանակցել:

- Այդ թում Լաչինի միջանցքի բացման շուրջ:

- Բազմիցս ենք ասել, որ 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարության 6-րդ յօդուածը, որը կարգաւորում է Լաչինի միջանցքի հետ կապուած հարցերը, միջանցքի անխափան գործունեության ապահովման հետ կապուած Հայաստանի որեւէ գործառնոյթ չի նախատեսում: Միջանցքի բնականոն գործունեությունն ապահովելն Ատրպեյճանի և Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորամիջի պատասխանատուությունն է: Իսկ Լեռնային Ղարաբաղի ներքին կեանքի հետ կապուած հարցերը ԼՂ իշխանությունների լուծման տիրոյթում են, և այստեղ են ՀՀ իշխանությունը գործառնոյթ չունի:

Յաւելեմ միայն, որ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանցով Լեռնային Ղարաբաղում յառաջացած մարդասիրական ճգնաժամն արդէն մտնեւում է մարդասիրական աղետի և միջանցքի անյապաղ չվերագործարկման պարագայում այստեղ միջազգային հանրության, այդ թում և առաջին հերթին ՄԱԿ-ի մարդասիրական միջամտության ծայրայեղ անհրաժեշտություն կայ:

- Կերջին շրջանում Ատրպեյճանը Լաչինի միջանցքի փակումը սկսել է հիմնաւորել Հայաստանից դեպի Լեռնային Ղարաբաղի իբր գինաւորեցի, մասնաւորապես ակաւների տեղափոխումը: Իսկ Ռուսիոյ արտաքին գործերի նախարար Սերկեյ Լաւրովն իր ասուլիսում յայտարարել էր, որ ատրպեյճանական կողմն իրենց է փոխանցել որա վերաբերեալ տուեալներ, որոնք իրենց ուսումնասիրում են:

- Պետք է նկատեմ, որ ատրպեյճանական կողմը կարծես թէ խճճուել է Լաչինի միջանցքի արգելափակման շուրջ իր խօսոյթում: Ատրպեյճանը յաճախ պնդում է, որ միջանցքը փակ չէ, ապա ասում, որ միջանցքի արգելափակումը բնապահպանական պատճառներ ունի, ապա, երբ յայտարարուեց, որ խնդրոյ առարկայ ներկայացուող



հանքը դադարեցրել է իր գործունեությունը, որպես Եկոակտիվատներ հանդէս եկող անձինք պահանջեցին ստուգել միջանցքով անցնող Կարմիր հաչի մեքենաները և մարդասիրական բեռները, ապա դիմակաւորուած ներխուժեցին ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ տուն՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձող երեխաների փոխարմիջոցը և հիաբեկեցին երեխաներին: Այժմ այդ գործողությունները պատճառաբանուում են ակաւների մտացածին տեղափոխմամբ:

Հերթական անգամ ընդգծեմ՝ Հայաստանի Հանրապետությունն ակաւնապատում իրականացրել է միայն ՀՀ ինքնիշխան տարածքում և դա արել է գուտ ինքնապաշտպանական նպատակներով, քանի որ Ատրպեյճանի կողմից ռազմական յարձակման է ենթարկուել 2021թ. Մայիսին, 2021թ. Նոյեմբերին և 2022թ. Մեպտեմբերին: Ներկայումս նոյնպես, ՀՀ ինքնիշխան տարածքի դեմ նոր ռազմական յարձակման վտանգը շարունակում է մնալ բարձր:

Այն ակաւները, որոնք քարոզակաւ նպատակներով ի ցոյց է դնում ատրպեյճանական կողմը և յայտարարում թէ դրանք 2021թ. արտադրութեան են ու Լաչինի միջանցքով Հայաստանից Լեռնային Ղարաբաղ են տեղափոխուել վերջերս, իրականում Ատրպեյճանի մօտ են յայտնուել 2021-2022թթ. Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ իրականացուած աղրբեշտական ագրեսիայի հետեւանցով օկուպացուած ՀՀ տարածքից:

- Լաչինի միջանցքի հետ կապուած են մեկ հակասություն կայ. Ատրպեյճանի իշխանությունը յայտարարում է, թէ միջանցքը բաց է, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները յայտարարում են, թէ միջանցքը փակ է: Սա կարող է միջազգային հանրությանը շփոթութեան մեջ գցել:

- Նաե դա է պատճառը, որ մենք առաջարկում ենք Լաչինի միջանցք ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի կամ որեւէ այլ միջազգային կազմակերպութեան փաստաւաւք խումբ ուղարկել և շարունակելու ենք առաջ մղել այս գաղափարը:

- Ատրպեյճանի նախագահ Իլիամ Ալիեւը յայտարարել է, որ երեւանը մերժել է Հայաստան-Վրաստան-Ատրպեյճան եռակողմ ձեւաչափ ստեղծելու առաջարկը: Ինչպե՛ս կը մեկնաբանեք դա:

- Հայաստանը մեծ հետաքրքրություն ունի Հարաւային Կովկասի երկրների միջե եռակողմ երկխօսութեան զարգացման հարցում: Թիֆլիսեան հնարաւոր հարթակը մենք դիտարկում ենք հենց այս՝ տարածաշրջանային եռակողմ քննարկումների, ոչ թէ Հայաստան-Ատրպեյճան երկկողմ հանդիպումների տիրոյթում: Այժմ շրջանառուում է Հայաստանի ու Վրաստանի վարչապետերի և Ատրպեյճանի նախագահի հանդիպման գաղափարը:

Հայկական կողմը պատրաստակամութիւն է յայտնել և այժմ էլ պատրաստ է նման հանդիպմանը, սակայն համաձայնեք՝ այդպիսի հանդիպումն առանձնապես արդիւնաւետ և խոստումնաւալից չի թում, երբ հնարաւոր չի լինում համաձայնեցնել անգամ աւտելութեան խօսքի և թշնամանքի վերացման վերաբերեալ յանձնառութիւն արտալայտող մի պարզագոյն համատեղ յայտարարութիւն:

- Ինչ կարող էք ասել տարածաշրջանային հաղորդակցությունների բացման գործընթացի վերաբերեալ: Կերջերս նաեւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը յոյս էր յայտնել, որ Հայաստանը կը ներգրաւուի արեւելք-արեւմուտք տարածաշրջանային մեխանիզմներին՝ համագործակցելով Ղազախստանի, Ուզպէստանի, Ատրպեյճանի, Թուրքիայի և Վրաստանի հետ:

- Հայաստանը միանշանակ շահագրգռուած է թէ՛ տարածաշրջանում փոխարկութեան ու տնտեսական ենթակառուցուածքների լիարժեք ապաշրջափակմամբ՝ 2020թ. Նոյեմբերի 9-ի և 2021թ. Յունուարի 11-ի եռակողմ յայտարարություններում ամրագրուած սկզբունքների համաձայն, թէ՛ աւելի մեծ տրանսպորտային նախագծերի մաս կազմելու մեջ: Տեղեան էք հաւանաբար, որ իր սիսուհարաւ և արեւելք-արեւմուտք մեխանիզմների համադրմամբ ՀՀ կառավարութեան կողմից առաջ է քաշուել «Հայկական հաչմերովկ» նախագիծը:

Տարածաշրջանային հաղորդակցությունների բացման վերաբերեալ մեր առաջարկներն ուժի մեջ են, և մենք այն կարող ենք իրագործել ցանկացած պահի՝ երկրների ինքնիշխանութեան և ճանապարհների նկատմամբ իրավազօրութեան ու ազգային օրէնսդրութեան պահպանման շրջանակներում: Ըստ Եութեան, այստեղ միակ ու հիմնական խոչընդոտն Ատրպեյճանի կողմից առաջ քաշուող արտաարածքային միջանցքի անհիմն պահանջն է:

ԱՐՃԱՆԻ ԱԳՆ-Ե ՆԱԽԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԵՊԱՏԱԿՈՎ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԶԱԻԱՔ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒՆ

Արցախի Հանրապետության Արտաքին գործերու նախարարութիւնը կ'ողջունէ Եւրոխորհրդարանին կողմէ Արցախի շրջափակման դատապարտումը և հաւանութիւն կու տայ մարդասիրական իրավիճակը գնահատելու



Նպատակով Լաչինի միջանցք փաստաւաւք առաքելութիւն ուղարկելու: Այս մասին նշուած է Արցախի ԱԳՆ-ի տարածած յայտարարութեան մեջ:

«Կողջունենք Ատրպեյճանի կողմէ Արցախի շարունակուող շրջափակման դատապարտումը Եւրոխորհրդարանին կողմէ և կոչերը՝ անյապաղ վերականգնելու Լաչինի միջանցքի գործունեութիւնը՝ ի կատարումն 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան դրոյթներուն: Երախտագիտութիւն կը յայտնենք այն պատգամաւորներուն, որոնք սկզբունքային դիրքորոշում դրսեւորած են Արցախի և անոր ժողովուրդին նկատմամբ Ատրպեյճանի անմարդկային քաղաքականութեան կանխման անհրաժեշտութեան վերաբերեալ:

Հաւանութիւն կու տանք մարդասիրական իրավիճակը գնահատելու նպատակով Լաչինի միջանցք փաստաւաւք առաքելութիւն ուղարկելու, ինչպես նաեւ՝ միջազգային կազմակերպություններու՝ Արցախ մուտքը ապահովելու կոչերուն: Բարձր կը գնահատենք Եւրոխորհրդարանի դիմումը միջազգային հանրութեան՝ աւելի գործուն մասնակցութիւն ունենալ Արցախի ժողովուրդի ճակատագրին մեջ:

Կրկին կ'ընդգծենք, որ Արցախի շրջափակումը Ատրպեյճանի՝ Արցախի ժողովուրդի ոչնչացման ծրագրի բաղադրիչներն են մէկն է: Ստեղծելով անտանելի կենսապայմաններ՝ Ատրպեյճանը նպատակ ունի վտարել Արցախի ժողովուրդը իր պատմական հայրենիքէն: Կը կարեւորենք միջազգային հանրութեան հաւաքական ջանքերու կերտնանցումը յստակ քայլերու իրականացման վրայ՝ միտուած Ատրպեյճանի ցեղասպանական ծրագրի իսպանման», նշուած է հաղորդագրութեան մեջ:



ԳԵՐԱՎՆԱՑԻ ՄԵԾ ԲՆԱԳԵՏ ԽՈՐհՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԼՐՏԵՄ ԲԼԱՌՍ ՖԻԷ (1911 -1988)

Գերմանացի տեսական բնագետ է հիլեական ռումբի հաշվարկները կատարող մասնագետ: Ան էր որ արեմտեան պետություններու կողմէ պատրաստուած առաջին հիլեական ռումբի գաղտնիքները փոխանցեց Խորհրդային միութեան: Պատմութիւնը օր մը իր արդար վճիռը պիտի տայ այս մարդոց համար, որոնք վտանգեցին իրենց կեանքը՝ հաւասարակշռելու համար հիլեական ուժը, քաջ գիտնալով որ անոր գոյութիւնը միայն կողմի մը ձեռքին մէջ վտանգաւոր է եւ յի ամէն կարելիութիւններով: Ֆիւլ յայն գիտնականն է, որ Խորհրդային միութեան փոխանցեց հիլեական ռումբին գաղտնիքը: Խորհրդային գիտնականներ հետագային խոստովանեցան, որ Ֆիւլի տուած գաղտնիքներով իրենք տարի մը շահեցան: Գաղտնի պարագային էր ուշանային, Արեւմուտքը կրնար օգտագործել հիլեական ռումբը որքան որքան բախումի ընթացքին: Գործիչմա եւ Նակագաջի ամենամեծ օրինակներն են Արեւմուտքի կարողութեան հիլեական ռումբը օգտագործելու առանց որքան խոչընդոտեալ: Թերեւս այս էր պատճառը, որ Բլաուս Ֆիւլ, զգալով գալիք վտանգը եւ խոչընդոտութենէ չտառապելու համար եւ ըլլալով ընկերվարութեան համակիր մը, որոշեց երթալ այդ քայլին:



Ըլլալով լուտեթական պատուելիի մը զաւակը, անդամակցելով Գերմանիոյ Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան, Բլաուս միշտ մնաց խոչընդոտ մարդը, որ իր խիղճը անելի վեր դասեց իր արհեստին վերաբերող գաղտնիքներէն: Աւարտած էր Լայպցիգի համալսարանի տեսական բնագիտութեան դոկտորանտը: 1932 թուականին կը վտարուի Սոցիալ Դեմոկրատ կուսակցութենէն եւ կը միանայ Զամայնա վար կուսակցութեան: Ապա հալածանքի ենթարկուելով ֆաշիստներու կողմէ, կ'ապաստանի Մեծն Բրիտանիա: Զոն կը պաշտպանէ իր ղոկտորակարգը:

1941 թուականին կը սկսի աշխատակցիլ Մեծն Բրիտանիոյ գիտնականներու խումբին հետ հիլեական ծրագրի աշխատանքի ծիրին մէջ: Այս տարիներուն է որ կը սկսի տեղեկութիւն փոխանցել Խորհրդային միութեան գաղտնի գործակալութեան:

1950 թուականին կը դատուի որպէս լուտե Եւ կը դատաւարուի 14 տարուան բանտարկութեան: Ապա կը հեռացի դէպի Դեմոկրատական Գերմանիա: Կը դառնայ անդամ Գիտութեան Ակադեմիային եւ կը միանայ Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան:

Պատմութեան դատավճիռը օր մը արդարութիւն պիտի շնորհէ Բլաուս Ֆիւլին, այն մարդուն՝ որ իր խիղճը անելի բարձր դասեց իր գործէն: Ան փրկեց մարդկութիւնը հիլեական ուժի վտանգէն:

ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԻ ԶՐԱԾԻՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՄՆ-ի Թեքսաս նահանգի «Օսթին» համալսարանէն խումբ մը բնագետներ կրցած են լուծել ջուրի հիլե թափանցելու եւ մաքուր ջրածին (hydrogen) ստանալու գաղտնիքը: Ամենամեծ արգելքը սուղ գինն էր այդ գործողութեան:



Ներկայիս գիտնականներ կ'օգտագործեն արեւու ճառագայթը որպէս ուժանիւք այդ բաժանումի գործողութիւնը կատարելու համար: Մաքուր ջրածինը ապագային պիտի օգտագործուի որպէս ուժանիւք արտադրելու միջոց: Գիտնականներ ջրածինը կը համարեն ուժանիւքի մեծ աղբիւր: Այս քայլը դուռը լայն պիտի բանայ ջրածինի օգտագործումին համար:

Այս հեղինակները իրենց կերպարները կ'օգտագործեն որպէս միջոց՝ ընկերութեան լաւ եւ վատ սովորութիւնները ի յայտ բերելու համար: Կերպարին հոգեբանութիւնը իր խօսքերուն եւ գործերուն մէջէն ի յայտ կու գար: Եսակերպ կերպարը իր շուրջ կ'ուզէր տեսնել զինք գովաբանող, զինք յարգող մարդոց խումբը, հոգ չէր թէ այդ գովաբանութեան մեծ մասը կեղծ ըլլար: Միւս կողմէ, համեստ մարդիկ կը նախընտրեն իրական եւ անկեղծ վերաբերմունք, հեռու ամէն կեղծիքէ եւ շողողութեան: Զոն ուրեմն, կերպարին հոգեբանութիւնը կ'որոշէ անոր վերաբերմունքը մարդոց հանդէպ եւ բնեղիքը ճամբան: Պատմութեան հոլովոյթը աննչուած է կերպարներու հոգեբանութեան:

Աղբիւր՝ The Encyclopedia of Psychology

ՀՊԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐՈՒԵՍԻ ՄԵՏ



19-րդ դարուն սկսաւ հոգեբանութեան օգտագործումը արեւեստի մէջ: Այսինքն նկարիչներ, գրողներ, քանդակագործներ եւ արուեստի մարզի մէջ արտադրողներ սկսան օգտագործել հոգեբանութիւնը որպէս կերպարի ստեղծումի, զարգացումի միջոց: Ֆրանսացիներ Մարքիզ Տը Սատ, Ֆլուպեր, ռուս Տոյսթոյեւսքի եւ շատ ուրիշ գրողներ այն արեւեստի գործիչներն էին, որոնք օգտագործեցին մարդուն հոգեբանական աշխարհը իրենց կերպարները ստեղծելու համար:

Այս հեղինակները իրենց կերպարները կ'օգտագործեն որպէս միջոց՝ ընկերութեան լաւ եւ վատ սովորութիւնները ի յայտ բերելու համար: Կերպարին հոգեբանութիւնը իր խօսքերուն եւ գործերուն մէջէն ի յայտ կու գար: Եսակերպ կերպարը իր շուրջ կ'ուզէր տեսնել զինք գովաբանող, զինք յարգող մարդոց խումբը, հոգ չէր թէ այդ գովաբանութեան մեծ մասը կեղծ ըլլար: Միւս կողմէ, համեստ մարդիկ կը նախընտրեն իրական եւ անկեղծ վերաբերմունք, հեռու ամէն կեղծիքէ եւ շողողութեան: Զոն ուրեմն, կերպարին հոգեբանութիւնը կ'որոշէ անոր վերաբերմունքը մարդոց հանդէպ եւ բնեղիքը ճամբան: Պատմութեան հոլովոյթը աննչուած է կերպարներու հոգեբանութեան:

Աղբիւր՝ The Encyclopedia of Psychology

ՌԵՍՈՒԹԻՒՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԻՍԱԿԱՆ

Յարգելի «Արարատ» ընթերցող, այս թիւով մենք պիտի շարունակենք Փանթուրքիզի ղեմ ղնող ուժերու ներկայացումը, որոնք կը համարուին հայ ժողովուրդի բնական դաշնակիցները:

Դժուար չէ տեսնել, որ Փանթուրքիզի մակարդակը եւ գայն չէ գոյացնող ուժերը ինչպէս երկ, այսօր ալ երեքն են. 1) Խորհրդային միութիւնը (ներկայիս Ռուսիան), 2) Զայաստանը եւ 3) համաշխարհային խաղաղութիւնը կամ՝ միջազգային փոխարարութեան մէջ խաղաղութիւնը: 1) Խորհրդային միութեան (ներկայիս Ռուսիոյ) դերը հիմնականն է բնականաբար: Զոկտմբերեան յեղափոխութեան յաղթանակէ երբ՝ Փանթուրքիզի հիմնադիր եւ հովանաւորող բոլոր ուժերուն ղեմ, որ հզոր պատուար մը կանգնեց՝ ծաւալողական այս ծրագրին դէմ, եւ մինչեւ այսօր կրցաւ ձախողցնել Փանթուրքիզի մակընթացութեան բոլոր փորձերը, սկսելով՝ միջամտողականներու ներխուժումներէն, դէպի Զայաստան թրջական արշաւանքներէ եւ Գիլերական ներխուժումէն մինչեւ ամերիկեան իմփերիալիզմի հետապնդած շրջափակումի եւ ներսէն պայթեցնելու ճամբավարութիւնը (տարագիր կառավարութիւններու միջոցով):

Զոկտմբերեան յեղափոխութեան յաղթանակէ եր քան նախկին Ռուսական կայսրութիւնը վերականգնակերպեց որպէս ազգային հանրապետութիւններու դաշնակցային միութիւն մը: Մեր պատմաբաններն ու քաղաքական գործիչները ցարդ ըստ արժանաւոր չեն տուած անհրաժեշտ զնահատական այն պատմական իրադրութիւնին՝ Փանթուրքիզի ծրագրին դէմ, որ կը կայանայ նախկին ցարական կայսրութեան թրջացել ու թրջալեզու ժողովուրդները որպէս ազգային անջատ հանրապետութիւններ կազմակերպումին մէջ: Նորահաստատ յեղափոխական իշխանութիւնը, առաջին 4-5 տարիներու ընթացքին, յամառ ու հետեւողական անդուլ պայքար մղեց թրջացել եւ թրջալեզու ժողովուրդներու ծոցին մէջ գործող կրօնամուկ, ցեղապաշտ

համաթրջականութեան յարող ուժերուն դէմ, մինչեւ որ յաջողեցաւ զանոնք համոզել՝ որպէսզի ընդունեն ազգային անջատ պետութիւններու մէջ խմբուիլ՝ որպէս առանձին միաւորներ: (Այս երկարաշունչ պայքարի մասին հայերէն միակ եւ առաջին ուսումնասիրութիւնը կատարած է Զրաչիկ Սիմոնեան՝ «Թուրք ազգային բուրժուազային գաղափարաբանութիւնը եւ քաղաքականութիւնը» խորագիրը կրող իր գիրքին մէջ, հրտ. 1986):

(Շարունակելի)
Աղբիւր՝ «Սիւնիզմի եւ Բանթուրքիզի Անջուրթիւնները», Մտեր Գ. Տրտրեան, 1990

ԱՌՂՁՍԱԳՅՈՒԹԻՒՆ ԸՎԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻ ՆՈՒԱԶՈՒՄ

Ըստ ԱՄՆ-ի «Մասաչուսեթ» հիւանդանոցի գիտական հետազոտական կենտրոնին, արտադրուած ուտելիքի մէջ շաքարի բաղադրութեան 20 առ հարիւր համեմատուած մը Լուազումը եւ խմիչքներու մէջէն 40 առ հարիւր համեմատութեամբ շաքարի նուազումը պիտի արգիլէ տարեկան 2.48 միլիոն սիրտանօթային հիւանդներու մահը սիրտի տագնապով կամ այլ սիրտանօթային հիւանդութեամբ:



Շաքարի բաղադրութեան յաւելումը ուտելիքի եւ խմիչքի մէջ, կը համարուի թիւ մէկ պատճառը սիրտանօթային հիւանդութիւններու զարգացումին: Ըստ այս հետազոտութեան, որքան հեռու մնանք արուեստական կամ ճերմակ շաքարի օգտագործումէն, այնքան հեռու պիտի մնանք սիրտանօթային հիւանդութիւններէ: Ըստ մասնագետներուն, գիրութեան եւ սիրտանօթային հիւանդութիւններու թիւ մէկ պատճառը շաքարի սանձարձակ օգտագործումն է:

ՄԵԿՈՅՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՐՈՂԵՐ ԺԲ.ՄԱՍ

ԲԵՐՈՂՈՒՄ Կիլիկիոյ բերդերը կը գտնուէին Զայկական Կիլիկիոյ տարածքին, բերդերուն մեծ մասը կառուցուած էր անոր սահմանամերձ գոտիին մէջ, Լեռնային Կիլիկիոյ կարեւոր անցքերուն մօտ կամ դէպի Միջերկրական ծով հոսող գետերու նեղ հովիտներուն մէջ:

Ը. Բերդուս ամրոց Բերդուս, ամրոց Կիլիկիոյ հայկական պետութեան մէջ, Մարաշէն հիւսիս: ԺԲ. դարու վերջաւորութեան եղած է Փիլարտոս Վարաժնունիի, ապա Գող Վասիլի տիրոջը: 1107 թուականին Գող Վասիլը Բերդուսի մօտ պարտութեան մատնեց սելճուք թուրքերու զօրքը: Անոր մահէն ետք Բերդուսին տիրեցին Իկոնիայի կամ Գոնիայի սելճուքները, իսկ 1157 թուականին Թորոս Բ.-ի եղբայր Ստեփանէն քաղաքը առաւ Իկոնիայի սուլթանէն, սակայն Թորոս Բ.-ը զայն վերադարձուց սուլթանութեան: ԺԲ. դարու վերջաւորութեան քաղաքին վերստին տիրած են հայ իշխանները: Գտնուելով Կիլիկիոյ հայկական պետութեան սահմանագիծի վրայ՝ Բերդուսը կ'ենթարկուէր յարձակումներու: 1208 թուականին Իկոնիայի սուլթան Խոսրով 2-ի արշաւեց Բերդուսի վրայ: Այս ժամանակ կը իջուին Բերդուսի իշխան Լեւոնը եւ որդին՝ Գրիգորը: Յիշեալ արշաւանքին կը մասնակցէր նաեւ Զալէպի իշխանը, որ Աստիոցի պատճառով թշնամացած էր Կիլիկիայի Զայոց թագաւոր Լեւոն Բ.-ին: Զալէպի զօրքը Մարաշի մօտ միացաւ Իկոնիայի բանակին եւ գրաւեց Բերդուսը՝ աներելով քաղաքն ու մօտակալ շրջանները: Լեւոն Բ. դիմեց Եգիպտոսի եւ Դամասկոսի սուլթանին, որ Զալէպի ամիրային հօրեղբայրն էր, եւ անոր միջնորդութեամբ հաշտութեան դաշինք կնքուեցաւ: Լեւոն Բ. ստիպուած էր քաղաքը զիջիլ Իկոնիայի սուլթանութեան, հրաժարիլ Աստիոցի դքսութեան դէմ նոր արշաւանքներէ: Մինչեւ 1915 թուականի Մեծ Եղեռնը Բերդուսի շրջակայքը պիտի կը բնակէին: Անոնք տեղահանուեցան եւ ցրուեցան տարբեր երկիրներ: Այժմ բերդը աներակ վիճակի մէջ է: (Շարունակելի)

Աղբիւր՝ «Ուլիքիփետիա»

ՆՈՐ ԱՐՅԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՆՆԵՐԸ Ե.ՄԱՍ

Նոր արհեստագիտութիւնը, մասնաւորապէս համակարգիչներու եւ բջիջային հեռախօսներու օգտագործումը բաւական նորութիւն մտցուց ընկերութիւններու աշխատանքի ոճին մէջ: Փոքր կամ միջակ չափի ընկերութիւններ այսօր կրնան յարմար գինով գնել համակարգիչ, բջիջային հեռախօս, ծրագիրներ ու զանոնք օգտագործել իրենց գործը յառաջ տանելու համար:

Ընկերութիւններ, զարգացնելու համար իրենց գործունեութիւնը, կրնան հաստատել զարգացումի ծրագիր: Օրինակի համար, տնօրէնութիւնը կրնայ որոշել զարգացնել յարաբերութիւնը յաճախորդներուն հետ եւ նոր յաճախորդներ արեւելնել իրենց ցանկին վրայ: Այս գործը կատարելու համար պէտք է համակարգիչի ծրագիր, որու մէջ պէտք է մտցնել բոլոր հին եւ նոր յաճախորդներու տուեալները եւ անոնք պահանջարկը: Այս ձեւով մենք քայլ կը պահենք յաճախորդներու ամենօրեայ պահանջին հետ եւ յաճախորդը գոհ կը մնայ մեր արագ անորոշարձէն իր պահանջին: Ինչպէս կը նկատենք, համակարգիչի ծրագիրը կ'օժանդակէ որ մենք պահենք հին յաճախորդները եւ նոր յաճախորդներ արեւելնել, զարգացնելու համար գործը: (Շարունակելի)

Աղբիւր՝ «smallbusiness.chron.com»

ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՒՆԱՐԻՆԵՒՐ

ԺԳ. ՄԱՍ ՊԱՐԵՍԻՆԻ ՈՐԻՍԱԿԱՆԸ

1987 թուականին սկսած պաղեստինեան առաջին հզօր բողոքի շարժումը՝ «Ինթիֆատա»-ն սկսաւ փոխել այս վարկածը: «Ինթիֆատա»-ն ցոյց տուաւ այն ազդեցութիւնը, որ ուներ Պաղեստինի ազատագրութեան կազմակերպութիւնը պաղեստինցի բնակչութեան վրայ: 1982-ի Լիբանանի ներխուժումէն ու պաղեստինեան պարտութենէն ետք, Թուրքիա հաստատուած Պաղեստինի ղեկավարութեան այլ ելք չէր մնացած, բացի վերադառնալէ իսկական ազատագրութեան գործին, շարժելով զանգուածները հայրենիքի հողին վրայ: Իսրայէլ ստիպուեցաւ բանակցիլ Եսաթ Արաֆաթի հետ



Աղբիւր՝ «Սայընս Տեյլի»

Կազմակերպութեամբ՝

Ս.Դ.Յ.Կ. ՏԻՐՈՒՄԻ ՈՒՄ. ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ



ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՄԻ

Նահասակութեան 94-րդ արտելիցի ՈԳԵԿՈԶՈՒՄ

Կիրակի, 22 Յունուար 2023-ին, Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Նոր Հաճնոյ Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, ներկաները պիտի ուղղուին Ֆըրն Էլ Շըպպէի Ազգային գերեզմանատուն, վերանորոգելու համար իրենց ուխտը:

Կազմակերպութեամբ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԼՆՆԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՈՒՄԿԱՎԱՐ ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐՑԱԿԻ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՂԵՄ ԱԳՐՊԵՅՏՆԻ ԿՈՂՄԵ ԾԱՆՈՒՄ ԸՆԿՐՈՒՄ ԱՐՇԱՐԻՆ

Տեղի կ'ունենայ չորեքշաբթի, 25 յունուար 2023-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, «Արին» կեդրոնին դիմաց, Պուրճ Համուտ:



ԱՆԳԼԻՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 7-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՍԻԹ ՅԱՂԹՅ ԹՈԹՆՆԵՄԻՆ

Անգլիոյ ֆութպոլի պիտեանութեան 7-րդ հանգրուանէն յետոյ մրցումներուն, 2-րդ դիրքը գրաւող «Մանչեսթըր Սիթի»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ 5-րդ դիրքը գրաւող Լոնտոնի «Թորքընհեմ Հոգփըր»-ին դէմ ու



յարդանակ տարաւ: Առաջին կիսախաղին, «Թորքընհեմ» տիրապետեց եւ շուտացի կիսապաշտպան Զուլկուսէմօ՝ 44-րդ եւ պրագիլցի պաշտպան Էմըրսըն՝ 45+2-րդ վայրկեաններուն յառաջ տարին խումբը: Երկրորդ կիսախաղին «Մանչեսթըր Սիթի» փոխեց մրցումին ընթացքը եւ արժանաւոր յարձակող Ալվարթո՝ 51-րդ, ալճերիացի յարձակող Մահրեզ՝ 63-րդ եւ 90-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 4-2 ի նպաստ «Սիթի»-ի, Մահրեզի եւ սպանացի կիսապաշտպան Ռոտրիի մէկական փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Մանչեսթըր Սիթի 4-2 Թորքընհեմ Հոգփըր 2-2

ՍՊԱՆԻՈՑ ԶՈՓԱ ՏԷԼ ՌԵՅԻ 1/8-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԼՈՆԱ ԵՒ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԱՆՑԱՆ ՅԱԶՈՐԴ ՓՈՒԼ

Սպանիոյ ֆութպոլի բաժակի՝ Զոփա Տել Ռեյի վերջին 16 խումբերու հանգրուանի հետաքրքրական մրցումի մը ընթացքին, 2-րդ դիրքը գրաւող «Ռեալ Մատրիտ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 5-րդ դիրքը գրաւող «Վիլյարեալ»-ի դէմ:



Առաջին կիսախաղին դաշտի տերերն էին տիրապետող եւ ֆրանսացի կիսապաշտպան Զափու՝ 4-րդ ու կիկերիացի կիսապաշտպան Զուբուեզե՝ 42-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-0, յարձակող Ժերար Սորենտի երկու փոխանցումներով: Սակայն «Ռեալ Մատրիտ» երկրորդ կիսախաղին շրջեց մրցումին ընթացքը եւ պրագիլցի յարձակող Վինիսիուս ժուսիոր՝ 57-րդ, պրագիլցի պաշտպան Էտեր Միլիթաօ՝ 69-րդ եւ փոխարինող կիսապաշտպան Տանի Սեպայոս՝ 86-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-3 ի նպաստ «Ռեալ»-ի, Տանի Սեպայոսի եւ փոխարինող յարձակող Մարքոս Անեսիոյի մէկական փոխանցումներով: «Ռեալ Մատրիտ» յաղթեց ու անցաւ յաջորդ փուլ: Իսկ առաջատար «Պարսելոնա» իր դաշտէն դուրս յաղթեց Գ. դասակարգի «Սեուլ»-ին: Պրագիլցի յարձակող Ռաֆինիա՝ 41-րդ, լեի յարձակող Լեվանտովսքի՝ 50-րդ, 90-րդ, փոխարինող փոխանցող կիսապաշտպան Զեսիե՝ 77-րդ եւ փոխարինող յարձակող Անսու Ֆաթի՝ 70-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Սեուլ (Գ.) - Պարսելոնա (Ա.) 0-5
- Վիլյարեալ (Ա.) - Ռեալ Մատրիտ (Ա.) 2-3

ԻՏԱԼԻՈՑ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ ԱԹԱԼԱՆՔԱ, ԼԱՅԻՈ ԵՒ ԵՆՐԻՆՅԻՄ ՅԱՂԹՅԻՆ

Իտալիոյ ֆութպոլի բաժակի վերջին 16 խումբերու հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 5-րդ դիրքը գրաւող «Լացիո Ռոմա»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Պոլոնիա»-ի դէմ ու տարաւ դժուար յարթանակ մը: Պրագիլցի կիսապաշտպան Ֆեֆֆի Ենտըրսըն նշանակեց մրցումին միակ կոլը 33-րդ



վայրկեանին, սպանացի յարձակող Փետրոյի փոխանցումով: Իսկ 3-րդ դիրքը գրաւող Թորինտի «Եուվերթիս»-ը իր դաշտին վրայ ընդունեց 13-րդ դիրքը գրաւող «Մոնզա»-ն ու յարթանակ տարաւ: Մրցումի 8-րդ վայրկեանին, յարձակող Զին յառաջ տարաւ «Եուվերթիս»-ը, ամերիկացի կիսապաշտպան Մաքքենիի փոխանցումով: 24-րդ վայրկեանին, կիսապաշտպան Վալթի հաշիւը դարձուց 1-1, կիսապաշտպան Զուլֆանիի փոխանցումով: Սակայն մրցումի 78-րդ վայրկեանին, յարձակող Զիբազ հաշիւը դարձուց 2-1, փոխարինող պրագիլցի Ալեքս Սանտրոյի փոխանցումէն օգտուելով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Աթալանթա (Ա.) - Սիլեզիա (Ա.) 5-2
- Լացիո Ռոմա (Ա.) - Պոլոնիա (Ա.) 1-0
- Եուվերթիս (Ա.) - Մոնզա (Ա.) 2-1

ՓՈՐՊՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՊԵՆՖԻՔԱ ՀԱՄԱՍԱՐԵՑԱՒ

Փորթուգալի ֆութպոլի պիտեանութեան երթի նախափուլին՝ 16-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Պենֆիքա» իր դաշտին վրայ մրցեցաւ 4-րդ դիրքը գրաւող «Սիտրիլիս Լիզբոն»-ի դէմ ու մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 27-րդ վայրկ-



եանին, դանիացի պաշտպան պահ սխալմամբ նշանակեց «Պենֆիքա»-ի բերդին մէջ: 37-րդ վայրկեանին, յարձակող Կոնսալո Ռամոս հաշիւը դարձուց 1-1: 53-րդ վայրկեանին, կիսապաշտպան Փոթե տուգանային հարուածով հաշիւը դարձուց 1-2: Իսկ 64-րդ վայրկեանին, Կոնսալո Ռամոս նշանակեց իր երկրորդ կոլը եւ հաշիւը դարձուց 2-2, սպանացի պաշտպան Ալեքս Կրիմալտոյի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պենֆիքա - Սիտրիլիս Լիզբոն 2-2
- Սիտրիլիս Պրակա - Պոպուլիս 1-0
- Փորթո - Ֆամալիսա 4-1
- Եսթրիլ Զազա Փիա 2-0
Պասաւորում. 1) Պենֆիքա 41 կէտ 40-12, 2) Սիտրիլիս Պրակա 37 կէտ 37-12, 3) Փորթո 36 կէտ 40-11, 4) Սիտրիլիս Լիզբոն 29 կէտ 31-18

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐ.**
14:15 Շապապ Սահել (4) - Շապապ Ղազի (6)
14:15 Սալամ Չղարթա (12) - Սաֆա (11)
14:15 Ախաա Աիլի Ալեյ (10) - Հիքմէ (9)
16:00 Պըրժ (5) - Աիլըտ (2)
- ԱՆԳԼԻՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
14:30 Լիվըրպոլ (9) - Չելսի (10)
17:00 Լեյսթըր Սիթի (15) - Պրայթըն Էստ Յով Ալպիլը (7)
19:30 Բրիսթըլ Փալաս (12) - Նիւքասթըլ Եուն. (4)
- ՍՊԱՆԻՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
15:00 Ռայո Վալեքանո (9) - Ռեալ Սոսիէտատ (3)
17:15 Եսփանիոլ (14) - Ռեալ Պէթիս (6)
19:30 Աթլէթիքո Մատրիտ (4) - Ռեալ Վալադոլիտ (17)
22:00 Սելթիա (19) - Զատիգ (19)
- ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
19:00 Սալերնիթանա (16) - Նափոլի (1)
21:45 Ֆիորենթինա (10) - Թորինո (9)
- ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
16:30 Իւնիոն Պերլին (5) - Հոֆֆենհայմ (11)
19:30 Զէլն (13) - Վերտըր Պրեմըն (9)
- ՖՐԱՆՍԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ**
16:30 Շամպէրի (Ե.) - Օլիմպիք Լիոն (Ա.)
19:00 Պասթիա (Բ.) - Լորիան (Ա.)
- ՓՈՐՊՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
17:30 Փաշու Ֆերրերա (18) - Սիտրիլիս Պրակա (2)
20:00 Սանթա Զլարա (16) - Պենֆիքա (1)
22:30 Վիթորիա Կիմարայէ (6) - Փորթո (3)
- ՊԱԵՏԹՊՈՒԼԻ ԷՆ.ՊԻ.ԷՅ.Ի ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՆ**
02:30 Զիլվէստ Զավալիլը (5) - Միլուոնցի Պաքս (2)
05:00 Սաքրամենթո Զինկ (2) - Ֆիլատելֆիա 76րդ (3)
- ԹԵԽՆԻՍԻ ԱՄՐՏԱԿԱՆ ԲԱՅ ՄՐՑ. 1/8-ՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ**
01:00-Էս սկստել, «beinsports» կայանէն
ԳԵՏԵԼԱՐՇԱՒ
03:15 Թուր Տաուն Անտըր շրջավազը, «eurosport»-էն
ԶՄԵՌՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՒԵՐ
11:00, 12:30 Ալպեան դահուկի մրց., «eurosport»-էն
11:00, 15:30 Մեծ սահնակ, Ալպեանքրի մրց., «euro-sport» կայանէն
11:45 Դահուկարշաւ, Լիվինիոյի մրց., «eurosport»-էն
14:00, 16:00 Պիլիքոն, Անթերսելվայի մրցում, «eurosport» կայանէն
14:40 Նորտիք քումպիլի մրցումներ, «eurosport»-էն:

ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻ ՓՈՎՈՒՄԸ ԸՆԴՂԵՄԱԿԱՆ ՀԵՏԵՒՆՔ ԹՈՂԱԾ Է...

(Շարունակուած Բ. Էջէն)

Հանդիպման ընթացքին ԿԳՄ նախարարը բարձրաձայնած է Լեռնային Ղարաբաղի շրջափակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամի եւ երեխաներու կրթութեան իրաւունքի խախտման խնդիրը՝ յիշեցընելով, որ 12 Դեկտեմբեր 2022-էն Ատրպէյճանի Հանրապետութիւնը փակած է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետութեան եւ ամբողջ աշխարհին հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, որուն հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամը անդառնալի հետեւանք ունեցած է բոլոր ոլորտներուն, յատկապէս երեխաներու կրթութեան վրայ:

Նախարարը շեշտած է, որ Լեռնային Ղարաբաղի մէջ այս պահուն չեն գործեր կրթական հաստատութիւնները, բազմաթիւ երեխաներ եւ ուսանողներ Հայաստանէն չեն կրնար վերադառնալ Լեռնային Ղարաբաղ:

Ի պատասխան՝ ռուս դեսպան Սերկէյ Զոփիրքիլը յայտնած է, որ ռուսական կողմը մտահոգ է ստեղծուած իրավիճակով եւ հետեւողական քայլերու կը ձեռնարկէ հակամարտութեան լուծման ուղղութեամբ:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحررة المسؤولة: اني صرافيان
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)